ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «16»____06____2026թ № 1781-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 2941-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 30-ի N 581-Լ որոշման 11-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 11-ի «Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագրի» շրջանակում մոնիթորինգ իրականացնելու կարգը հաստատելու մասին N 2941-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 2-րդ կետում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը» բառերը փոխարինել ««Տնտեսական

զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկին» բառերով.

2) Հրամանի N 1 հավելվածի 2-րդ կետում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ)» բառերը փոխարինել ««Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկին (այսուհետ՝ ՏԶՖԿ)» բառերով.

3) Հրամանի N 1 հավելվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերի և 6-րդ կետի 2-րդ ենթակետում «ՊՈԱԿ» բառը՝ իր հոլովաձևերով փոխարինել «ՏԶՖԿ» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ սույն հրամանը ստորագրվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում սույն հրամանը հրապարակել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ